

Ռուսմանհայոց ներկայն և ապագայն, գրեց Պետրոս քահ. Մամիկոնեան. — Վայաց 1895. — Պարունակում է խիստ կարևոր և հետաքրքիր տեղեկութիւններ Աւստրիոյ արեւելեան նահանգներում, Բուլղարիայում և Ռուսմանիայում բնակող հայերի անցեալի և ներկայի մասին. Անցեալի նկատմամբ Արժ. Հեղինակն օգուտ է քաղել մի շարք հայերէն և օտար գրաւոր յիշատակարաններից ու արձանագրութիւններից, որոնք մեծ մասամբ անմատչելի են բանասէրների համար. իսկ ներկային ծանօթ է նա, ինչպէս երևում է, երկարամեայ անձնական փորձառութիւններով, որով նորա գրուածքը, չնայած մատենագրական ինչ ինչ թերութիւնների, հայ գաղթականութիւնների պատմութեան համար առանձին արժէք ունեցող մի գործ է. Զուր տեղը Տէր Հայրը ազգասիրական եռանդից մղուած իւր գրքի մէջ տեղաւորել է Վեհափառ Խրիմեան Հայրիկի և «Արձէշի վանքի» այնպիսի պատկերներ, որոնք մի քանի դար առաջ տպուած գրքերում կամ Գ. Բաժանման աշակերտի տետրակում միայն խորթ չէին երևայ:

Bibliotheca scriptorum graecorum et romanorum Teubneriana.—Patrum Nicænorum nomina latine, graece, cop-tice, syriace, arabice, armeniace.—Sociata opera ediderunt H. Gelzer, H. Hilgenfeld, O. Cuntz.—Lipsiae, 1898. —Այս կարևոր աշխատութիւնը, որ յանձն է առել յայտնի պատմաբան հայագէտ ուսուցչապետ Գեղցեր, Ինկայի համալսարանի ուրիշ երկու ուսուցչապետների՝ Հիլգենֆելդի և Կունտի գործակցութեամբ, նպատակ է ունեցել բոլոր մինչև այժմ յայտնի եղած տպագիր և անտպ գիշատակարաններից քաղելով ներկայացնել նիկիոյ ժողովի հայրերի աւանդն լիակատար ցանկը, Լատիններէն, յունարէն, կոպտերէն, ասորերէն և արաբերէն յիշատակարանների հետ յառաջ է բերուած նաև հայերէնը 6 ձեռագիրների համեմատութեամբ, որոնցից երկու լատագոյները Մայր Աթոռի մատենադարանին են, և համեմատութիւնը մենք ենք հոգացել Պրոֆ. Գելցերի խնդրանքով. Աւելի ուշ մենք երկու ուրիշ ձեռագիրներ ևս գտնել և համեմատութիւնն ուղարկեցինք Մեծ. ուսուցչապետին, բայց նա չէր կարողացել այլևս օգտուել նոցանից և բաւականացել է միայն համառօտ ծանօթութիւն գնելով յառաջարանի մէջ.

Կ. Վ.

Պատմութիւն 75-ամեայ գոյութեան ներսիսեան Հայոց հոգևոր դպրոցի, որ ի Թիֆլիզ (1824-1899 թ.) Հատոր Ա. (1824—1850 թ.) վեց պատկերով. —Աշխատ. Աղէքսանդր Գ. Երիցեանց. հրատ. ներսիսեան Հայոց հոգևոր դպրոցի, Թիֆլիզ, 1898.

—Патріархъ всѣхъ Армянъ Нерсесъ V.-й. Съ приложеніями и съ фототипіями 1) Патріарха Нерсеса. 2) Кн. М. С. Воронцова, и 3) Е. К. Воронцовой. Тифлисъ, 1898:

—Վրաց պօէտ Ակակին հայերի մասին. Պրոֆեսոր Ն. Մարր. «Նովոյէ Օրօդ» լրագրից թարգմ. Ս. Հ. —Թիֆլիս, 1898.

—Շէլլուի սպանութիւնները. —«Նովոյէ Օրօդ» լրագրից թարգմ. Ս. Հ. —Թիֆլիս, 1898.

—Ազգային մատենադարան. Իէ. —Մովսէս Խորենացու նորագոյն աղբիւրներու մասին. Գր. Խալաթեան, Վիեննա, 1898.

—Զգացմունքների աշխարհ (Խ. Արմվեանի երկերի աւթիւ—արտ. «Լուսայ» հանդիսից), Խ. Յարութիւնեանց. —Տփլիս, 1898.

—Զարա. —Իւրի Ղազի բէկ. թարգմ. Է. Թ. Ս. Պետերբուրգ, 1898.

—Աշխարհագրութիւն Օսմանեան կայսրութեան (տարր. նախակրթարանի բարձր. դասընթացք, Ա. տարի—Ուսումն. խորհրդէն վաւերացուցած). Գ. Խաչկոնց. —Կ. Պոլիս, 1898.

—Լեւ Տալստօի Կրէյցերեան Սօնտի վերջը. Մ. Կրիստ. թարգմ. Յ. Սարիկեանի. —Վաղարշապատ, 1898.

—Տեղեկագիր Հայոց Բարեգործական Ընկերութեան Կովկասում. 1896 և 1897: —Թիֆլիզ, 1898.

